# Հայ գրականության օլիմպիադայի հանրապետական փուլի հարցաշարերի

## պատասխաններ

## XII դասարան

1. Հայ գրականության քառուղիներում հանդիպում են անուններ ու ստեղծագործություններ, որոնք ոչ միայն շրջադարձային են գրականության պատմության համար, այլև լուսարձակի դեր են կատարում ճանաչելու այն ժամանակը, որի մասին խոսվում է: Այդպիսի գրքերից է Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը, որը ծնվեց ժամանակի պահանջով ու թելադրանքով: Հայրենական մեծ պատերազմը թևակոխել էր հաղթանակների շրջան, բայց մինչ այդ եղել էին ծանր պարտություններ, և Դեմիրճյանը,իր իսկ հավաստմամբ, դիմեց մեր ժողովրդի պատմությանը՝ հիշեցնելով նրա պատմության հերոսական դրվագները: Այդպիսի մի շքեղ պատմություն է «վասն հայրենեաց, վասն հաւատոյ» կարգախոսով Ավարայրի ճակատամարտը: 1943- ին լույս տեսավ «Վարդանանք» « հերոսական-դյուցազներգական և ողբերգական պաթոսի» պատմավեպի 1-ին հատորը, որը գրվել էր ընդամենը վեց ամսում, տանը և հիվանդանոցում, շիկացած մտքով, պոռթկացող ոգով: Այն հայ պատմավեպի գագաթներից մեկն է: Իր պատմավեպը գրելիս Դեմիրճյանը հանգամանորեն ուսումնասիրել է 5-րդ դարի պատմիչների մատյանները: Այս գրքի համար սկզբնաղբյուրներ են ծառայել Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» և Ղազար Փարպեցու«Պատմութիւն հայոց» մատյանները: Դեմիրճյանը թափանցել է պատմական իրադարձությունների էության մեջ՝ հանգամանորեն ուսումնասիրելով այս աղբյուրները: Պատմավեպի 1-ին հատորը կրակե շապիկ հագցրեց և՛ մարտնչող զինվորներին, և՛ ստեղծարար աշխատանքով նրանց թիկունքը պահող աշխատավոր ժողովրդին: Հրաշալի է բնութագրել այդ պատմավեպի ծնունդը Դեմիրճյանի անդավաճան մտերիմը՝ Ավետիք Իսահակյանը.«Հեղինակը ապրել է իր երազը, իր ստեղծագործությունը, գրել է ոգով և ավյունով, գրել է կրքով, երիտասարդական խանդավառությամբ, մեծ հայրենասիրությամբ, վարակող տրամադրությամբ:Վեպը վառվում է ռազմական կրակով, յուրաքանչյուր էջից, կարծես, վրնջում են նժույգները: Կորովի երիտասարդները պատրաստ են կռվել և զոհվել հայրենիքի համար»: Ավելի ասել թերևս անհնար է: Պատմավեպն , իհարկե, արդիական է, այդես կռվեց մեր ժողովուրդը և՛ հայրենականում, և՛ Արցախյան ազատամարտում, և՛ 44-օրյա պատերազմում, և կռվում է ամեն օր՝ կրկնելով նախնյաց սխրանքը: Դեմիրճյանին շատ երկար է մտատանջել Վասակի կերպարը, ընդունելով ,որ Եղիշեն՝ որպես Վարդանի գրագիր կարող էր Վարդանին պանծացնելու համար անհարկի նսեմացնել Հայոց մարզպանին, նա, միևնույն է, երկմտում է նրան դավաճան համարել: Նրա խորին համողմամբ, Վասակը փորձում է դիվանագիտորեն լուծել հարցերը, բայց չի կարողանում համոզել ընթերցողին՝ բացի մի քանի հեգեբանական դրվագից…

2. Անժխտելի փաստ է մեր գրականության մեծ մասիսերգակի մեծ մայրապաշտությունն ու մեծ մարդապաշտությունը, մեծ հայրենապաշտությունն ու մեծ ժողովրդապաշտությունը: Անմահ լոռեցուց ու Վարպետից հետո թերևս ոչ մի բանաստեղծ այնպիսի ժողովրդականություն չի վայելել, ինչպիսին ունեցել է Շիրազը դեռևս «Գարնանամուտի» օրերից: Եվ նրա ժողովրդականությունը չէր բխում միայն նրա մարդամոտ, անկեղծ ու անկաշառ բնավորությունից. այն խորապես գալիս էր «Հին աշխարհից» ու «Սուրբ հայրենիքից», «Հուշարձան մայրիկիս» ու «Քնար Հայաստանիից»,«Հայոց դանթեականից» ու նրա մեծագույն ցավից՝ բանտված Մասիսից, որի ձյուներում հանգչում է մեծ բանաստեղծի սիրտը՝ սպասելով վերադարձի : Շիրազի անպարփակ ժողովրդայնությունն ու փառքը սնվում էին նրա հախուռն տաղանդից ու անսանձ երևակայությունից, մտքի անկաշկանդ վերթևումներից ու անզիջում արդարամտությունից: Անխառն ու անարատ սիրով նա երգեց Մայր ու Հայրենիք, Մասիս ու Ցավ, Սեր ու Ժողովուրդ:
Շիրազի մարդերգության մեջ առանձնանում է մայրերգությունը, որն ամփոփվել է «Հուշարձան մայրիկիս» հրաշալի գրքում: Գրքի վերնագիրն իսկ այնքան յուրահատուկ է ու գտնված, որ դրանից զատ այլ խորագիրը փնտրելն ուղղակի անպտուղ աշխատանք է: Գիրքը իրավամբ անձեռակերտ հուշարձան է աշխարհի բոլոր մայրերին.

Մայրիկիս մեջ ողջ մայրերին ես կզգամ
Նրանց կերգեմ՝ երգելով մորն իմ անգին
Թող ինձ կարդա մայրամոռն էլ անզգամ,
Պաշտե գեթ իր մայրիկին:

Այսպիսի նախերգանքով է բացվում ժողովածուն. յուրատեսակ մի հրովարտակ՝ ուղղված բոլոր զավակներին: Բոլոր նրանց, ում համար նույնանում են մայրը, մարդը, հայրենիքը: Մայրը աստվածացված է, հասցված պաշտամունքի: Մայրը կեցության հիմքն է, կյանքի ամենօրյա աղոթքը, բարոյականության անխարդախ կշեռքը, որով բանաստեղծը կշռում է մոր և հայրենիքի սերը, և միայն այս դեպքում է «համբուրում նժար նժարի»: «Մայրս» բանաստեղծությունը ոչ միայն մոր կերպարի բազմակերպությունն է, այլև համաստվածություն՝ երկնային և երկրային: Նա ճորտ է ու տեր, հույսի դուռ է ու մատուռ, աղբյուր է ու ծարավ քույր, ամրոց է ու օրորոց, հաց է ու Աստված : Մայրը միակն է աշխարհում, որ կարող է կրել այդ աշխարհի ցավերը, կարող է ամոքել անդարմանելի վիշտը ու «դառնալ մի բուռ» , իսկ երբ հեռանա այս աշխարհից, Աստված նրա վրա շիրմաքար կդնի ձյունի մաքրաթև փաթիլներից՝

Ձյուն է իջնում, կուտակվում մորս վրա վերևից……
Աստված ինքն է ստեղծում մորս վրա շիրմաքար:

Եվ քանի որ մայրը վերածվում է սրբության տաճարի («Ձեռակերտն է մայրս աստծո հանճարի») , ուրեմն՝ Անցոր՛դ, խոնարհիր գլուխը քո սեգ
Այստեղ հանգչում է մի բուռ տիեզերք:
Իսկ մենք այդ տիեզերքի հավերժ խնկարկուներն ենք…

3. Հայ գրականության պատմության մեջ հավերժ ծաղկավորվելու է մի մատյան, որն ընդմիշտ կոչվելու է «Պարույր Սևակի մատյան», իսկ այդ մատյանի մշտաբույր թերթերը մեզ տանելու են դեպի մարդը, նրա բարդ ու գաղտնախորհուրդ աշխարհը, այն աշխարհը, որտեղ ապրումն ու խոհը յուրաքանչյուրինս են, այն աշխարհը, որտեղ մենք հայտնվում ենք ափի մեջ ու դառնում պարզապես մարդ: «Մարդը ափի մեջ» ժողովածուն, որ լույս աշխարհ եկավ 1960-62 թվականներին, ազդարարեց պոեզիայի բարենորոգչի ծնունդը: 1942-ին Ռուբեն Զարյանը Պարույր Սևակ անունով մկրտեց գյուղից քաղաք եկած վառվռուն ,խայտակն աչքերով պատանուն, որ խոստանում էր՝ **Ինքս պիտի շապիկն իմ կայմին առագաստ շինեմ, որ լինեմ վստահ:** Ահա այս վստահությամբ նա գրականություն բերեց մարդուն, և այստեղ տեղին է հիշել ռուս բանաստեղծի դիպուկ բնութագիրը՝«Там человек сгорел»: Այո՛, այստեղ այրվում է մարդը, մարդը ներկայանում է մեզ իր բոլոր կողմերով՝ մերկ ու անզարդ, այնպիսին,ինչպիսին կա: Այս ժողովածուն անի շքեղ էջեր, անվիճելի ճշմարտություններ, որոնք մարդուն տանում են դեպի մարդը, որտեղ մարդն սկսվում է ինքնաճանաչումից՝ աստիճանաբար գնալով դեպի մարդ և դարաշրջան, մարդ և քաղաքացի, մարդ և մարդկայնություն: Այստեղ բանաստեղծի կերպարով որոշակիացող մարդ- անհատի ինքնաբացահայտումն է՝ բոլոր առումներով: Մարդկայինի պահանջը Սևակն այսպես է ձևակերպում.«Խոսել գեղեցիկ ու թանկ բաներից՝ Ծաղկից, պարտեզից, երեխաներից… Եվ լինել անհոգ, և անդարդ լինել, Պարզապես սիրող- ապրող մարդ լինել»: Շարքը քնարական զրույց է բանաստեղծ մարդ- անհատի և գրեթե չերևացող սիրած աղջկա միջև, որի առջև նա բացում է իր հոգին՝ տեղատարափ անձրևի նման թափելով կյանքի ու մարդկայնության մասին իր բացահայտումները: Նա բացահայտում է, թե ինչ է ուզում և ինչ չի ուզում, ինչ է հաստատում և ինչ է ժխտում, ինչ է երազում, ինչո՞ւ է զղջում: Շարքն ունի ներքին քնարական միասնություն, որ սկսվում է ապրելուց, բայց ապրել այնպես «Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը: Որ դու ինքդ երբեք չզգաս քո սեփական մանրությունը»: Վերնագրերի հաջորդականության մեջ դանդաղորեն բացվում է մարդը՝ զղջացող, կարդացող, խոստացող, հպարտացող… Նա ուզում է՝« մարդկանց առաջ և քո առաջ ահավասիկ ինքս եմ բացվում, ինչպես մանուկն օրորոցում, երբ շոգում է..», և բացվում է, այն է ուզում՝ ինչ ամենքս, ու փառաբանում է մարդուն՝ սերմնացանին,ձկնորսին,,կաքավներ թռցնող բահի զնգոցը, մանուկների խաղը, ջահել աղջիկների աննպատակ ծիծաղը և մարդուն, որ հավասար է դարձնում մարդուն մարդու: …… Իսկ թե մեռնե՛լ… հերոսի պես, ու քրքրվոլ դրոշի պես…

Եվ հայտարարում է՝- Գործուղում տվեք ապագա գնամ…, իսկ ապագան արարող մարդունն է, այն մարդունը, և խոստանում է հավետ իրեն հավատարիմ մնալ, մաքառել դարի դավի դեմ, արհամարհել տգիտությունը, որն ունակ չէ ծնելու, անիմաստ չպայքարել, ուրագել ու կացինել տմարդությունը, և խոստանում է՝ ոմանց նման իզուրտեղը չխոստանալ… Ահա ամենքի առաջ բացվող մարդը, որ պատրաստ է իր արյունով ոռոգել, վերստեղծել ու նորոգել մարդուն և զարմանքով ավարտում է շարքը. Զարմանում եմ, որ ինձ վրա զարմանում եք…

4. Համո Սահյան. բանաստեղծ, ում հետ ցանկացած հանդիպում դառնում է տոն ու տոնակատարություն, դառնում է բնության զարթոնք ու քարափների երգ։ Շարունակելով մեծարենցյան ու եսենինյան բնապաշտությունը, խնկարկելով Մեծն բնության առաջ՝ Սահյանը ձուլվում է հենց այդ բնությանը, դառնում է երկինքը քանդուքարափ անող տեղատարափ անձրև, Որոտանի շառաչ ու կամարակապ ծիածան, առուների կապույտ շրթունքներ ու ցրտից կապտած քար, Գյազբելից փչող զով քամի ու ծաղիկների բույր, հանդի բույր ու շշուկ… Ահա այս Սահյանի աշխարհն է, որ մեծարում է առաջին սերը բնության գրկում, որոնում է առաջին ծիծաղների, առաջին արցունքների վկաներին և հյուսում քարափների ասքը՝ հավերժորեն կախարդիչ։ Ուրիշ է այդ աշխարհը, որ կոչվում է սահյանական, դեպի բնություն գնացող Սահյանը ասում է. Քո գիրկն եմ եկել, որ ձայնագրեմ

Մամռած քերծերիդ աղոթքը քարե
Եվ նրանց քարե երազանքները։
Ու ձայնագրեմ քո քարափների
Օրհնությունը լուռ
Եվ նրանց քարե առասպելները։

Ահա այս ուղևորը սրբազան մի դողով աստվածացնում է քարափների հեքիաթային աշխարհը, որտեղ քարափը ձորում նահապետի նման բազմել է ու ամենքին իրեն արժանի պատիվն է տալիս՝ վայրի աղավնուն, մոլորված ամպին, խրտնած քարայծին, հոգնած ճամփորդին և հաստատում բնության ու մարդու հավիտենական դաշինքին։ Քարափների ասքը դառնում է հուզական վերաբերմունք, հոգեկան պահանջ ու տագնապ, հրճվանք ու հույզ, գտնում ու կորուստ։ Նա գնում է դեպի իր արմատները, իր լեռան գագաթն ու իր ձորը՝ գտնելու իր աշխարհը, իր մանկությունը, վայելելու իր՝ ամեն ծառի տակ նստել- հանգստանալը, իր անկրկնելի բնության խորն խորհուրդը։ Նա բնության՝ ամառային օրվա «ծղնոտաբույր թիկնոցի» մեջ էր ամփոփում հազարամյա հայ «ընտանիք – պետության» հրաշալի պատկերի հարությունը։ Հայրենի տան, հայրենի եզեթքի երգը Սահյանի պոեզիայում դառնում է ամենօրյա կենսաձև, դառնում է « մարդն իր հայրենիքում» դավանանքի հաստատումը։ «Քարափների երգը» բնության ու մարդու անխախտ երդման շատրվանում է, պատկերների հեղեղ ու անձնավորում, կոճղի, տերևի, ծիածանի ու քարափի, առվի ու ամպի հավերժական զրույց ու ինքնաճանաչում։

Հայ գրականության օլիմպիադայի
հանրապետական փուլի հարցաշարերի
պատասխանների գնահատման չափանիշներ
XII դասարան

1. հարց՝ Ենթահարցեր՝ 1 – 1 մ., 2 – 2 մ., 3 – 2 մ.
2. հարց՝ Ենթահարցեր՝ 1 – 0.5 մ., 2 – 1 մ., 3 – 3.5 մ.
3. հարց՝ Ենթահարցեր՝ 1 – 1 մ., 2 – 3 մ., 3 – 1 մ.
4. հարց՝ Ենթահարցեր՝ 1 - 1 մ., 2 – 3 մ., 3 – 1 մ.

**Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան**